ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի նոր և նորագույն պատմագիտության զարգացումն անխզելիորեն կապված է հանրաճանաչ պատմաբան և գիտության հմուտ կազմակերպիչ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի անվան հետ: Գիտական ասպարեզ մտնելով 1930-ական թվականներին, նա և նրա սերնդի լավագույն ներկայացուցիչները կարողացան հաղթահարել բազում արգելքներ և իրենց ուսերի վրա վերցնել գիտության այդ ճյուղի զարգացման դժվարին գործը:

Ընդհանրապես, ըստ արժանվույն գնահատելով խորհրդային պատմագրության ձեռքբերումները, չենք կարող, ցավոք, չարձանագրել, որ այդ պատմագրությունն իր սկզբնավորման առաջին իսկ շրջանից անցյալի ժառանգության յուրացման ասպարեզում երևան բերեց ոչ համապարփակ և ոչ անկողմնակալ մոտեցում: Կողմնորոշվելով, ամենից առաջ և առավելապես դեպի սոցիալ-տնտեսական խնդիրները, 1920-1930-ական թվականներին խորհրդահայ պատմագրությունն իր էջերից համարյա իսպառ բացառեց ազգային-ազատագրական պայքարի պատմության հիմնահարցերը: Ավելին, վերոհիշյալ տասնամյակներին այդ պատմագրությունը մեծ մասամբ տարվեց հայ ժողովրդի միայն արևելյան հատվածի՝ սոցիալ-հասարակական տեղային և ներռուսասանյան առնչություններով, ավելի ստույգ՝ ուսումնասիրության առարկա դարձրեց Արևելյան Հայաստանի ժողովրդի ապրելակերպն ու առնչումները՝ ռուսամետ և հակացարական հակումներով:

Եթե չհաշվենք հայ ժողովրդի նորդարյա պատմության մի շարք կնճռոտ հարցերի լուսաբանմանը նվիրված հարուստ նյութերի վերլուծությամբ օբյեկտիվ դիրքերից գրված և հետագայում բազմիցս քննադատված Բագրատ Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» 1928-1929թթ., Մոսկվայում, ռուսերեն, լույս տեսած երկհատոր աշխատությունը, ապա, փաստորեն, մինչև 1950-ական թվականների կեսերը խորհրդահայ պատմական գրականությունից խորթացել էր հայ ժողովրդի առավել մեծ՝ արևմտյան հատվածի պատմական ճակատագրի համազգային արծարծման հարցը: Նացիոնալիզմի մեջ մեղադրվելը ամենուրեք, ինքնին, տագնապահարույց վախ էր ներշնչում:

Տևական պատմաշրջան ընդգրկող անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի հայ պատմագիտական և գրականագիտական վախվորած միտքը, գռեհիկ սոցիոլոգիզմի հետ դաշնակցած, «անխնա մերկացնում» և «դատապարտում» էր այն ամենը, ինչն առնչվում էր ազգային-ազատագրական պայքարի հարցերին, եթե նույնիսկ այն ուղղված լիներ օսմանյան ջարդարարների, սրանց հովանավոր մեծ տերությունների քաղաքականության դեմ:

Շուրջ քառորդդարյա ընդարձակ ամայության մեջ նշմարելի բարձունք էր Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ.» մենագրությունը:[1] Պատմաաղբյուրագիտական ամուր հենքով ու քաղաքացիական շնչով գրված այս աշխատությունը, որը որպես դոկտորական դիսերտացիա պաշտպանվեց 1946 թվականին և ոչ քիչ արգելքներ հաղթահարելուց հետո լույս տեսավ միայն ինն տարի անց՝ 1955 թվականին, նոր շուրջ ներարկեց հետստալինյան հայ պատմագիտական մտքին և խորհրդածությունների ու մտորումների նոր առիթ տվեց նոր սերնդին: Գիտնականն իր այս աշխատության մեջ առատ նյութերի հենքի վրա հանգամանորեն բացահայտեց արևմտահայության թշվառ կացությունը, վեր հանեց նրա մաքառումը և ազատագրական շարժման ընթացքը, ճշտորոշեց այդ շարժման աղերսները հարևան ժողովուրդների հակասուլթանական ընդվզումների հետ, անշեղ գծեց հայ ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային բովանդակությունը և շարժման առաջատար ուժերի ծրագրային նպատակները, արևմտյան տերությունների հետաղիմական, հակահայկական ընթացքը և այլ հարցեր:

Ուշագրավ հիմնաղբյուրներով հարուստ այս աշխատության մեջ Մ. Ներսիսյանը կարողացավ մեկուսանալ գռեհիկ սոցիոլոգիզմի ջատագով «օրթոդոքս առաքյալների» ազդեցությունից, համակողմանի ներկայացրեց արևմտահայ ազատագրական շարժման նպատակամղվածությունը: Հայ ազգային-ազատագրական շարժման բազում ելակետային դրույթների հետ առնչված Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Գր. Արծրունու, Գարեգին Սրվանձտյանի և այլոց անանց ծառայությունների իր բնութագրումներով գիտնականն ինքնին դյուրացրեց ապագաղափարականացնող տխրահռչակ «միասնական հոսանքի» դեմ պայքարի գործընթացը:

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գիտական ուսումնասիրության գործին ոգեկոչող արժեքավոր այս աշխատությունից բացի, Մ. Ներսիսյանը նույն թվականին ՀԳԱ «Տեղեկագրում» տպագրեց միջնակարգ դպրոցների համար պատրաստվող հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երկրորդ հատորի՝ «Հայ ժողովրդի պատմություն. 1900-1917թթ.» բաժինը, ուր առաջին անգամ խորհրդահայ դպրոցի աշակերտը պետք է ընդհանուր պատկերացում կազմեր Հայկական հարցի, Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատի մարտական գործողություններին հայերի մասնակցության, 1915-1916թթ. Արևմտյան Հայաստանում և թուրքական կայսրության մյուս նահանգներում հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական կռիվների մասին: 1960-ական թվականների սկզբին գիտնականը հանդես եկավ Զեյթունի 1862թ. ապստամբության, հայկական կոտորածների, հայ ազատագրական պայքարի ժողովրդական հերոս Անդրանիկի և այլ հարցերի շուրջ մի շարք հոդվածներով:

Մեծ եղեռնի 50-ամյակից մեկ տարի հետո՝ 1966-ին, Մ. Ներսիսյանի առաջաբանով և խմբագրությամբ լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (ռուսերեն) փաստաթղթերի և նյութերի ժողովածուն՝, ուր համակողմանի ներկայացվում է սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի և երիտթուրքերի կազմակերպած զանգվածային կոտորածների արյունառուշտ քաղաքականության էությունը: Գերազանցապես արխիվային փաստաթղթեր և կարևոր այլ նյութեր պարունակող այս ժողովածուն, որ իր ժամանակին վիթխարի դեր կատարեց ազգային զարթոնքին նպաստելու գործում, այսօր մնայուն, արժեքավոր պատմական տարեգրություն է Հայոց ցեղասպանության մասին: Հայ ժողովրդի ազգային-քաղաքական հիմնախնդիրների, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության գիտական լուսաբանումը նաև՝ չորս տասնամյակ նրա խմբագրած «Պատմա-բանասիրական հանդեսի» հրապարակումների գլխավոր կողմնորոշումներից մեկն է եղել: Անգամ կյանքի խիստ առաջացած տարիքում վերջին մեկ և կես տասնամյակում, նա շարունակում էր գիտնականի իր բեղմնավոր գործունեությունը, մեկը մյուսի հետևից տպագրելով արժեքավոր հոդվածներ, որոնցում համակողմանիորեն փաստարկված և կոտրամաբանությամբ մերկացվում են հայ ժողովրդի նոր ու նորագույն պատմության կեղծարարները:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր բոլոր հրապարակումներում Ներսիսյանը շարունակ ընդգծել է, որ Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական կոտորածները թուրքական կառավարության պետական քաղաքականության հետևանք են և խրախուսվել են եվրոպական տերությունների կողմից: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի կարևորագույն դրսևորումներից մեկը դիտելով նրա մասնակցությունը տարբեր զինաբախումներին՝ միշտ Ռուսաստանի կողմում, պատմաբանը բացահայտել է այդ մասնակցության հիմնական դրդապատճառը, այն է՝ արևմտահայությանը բարենպաստ պայմաններ ստեղծել թուրքական լուծը թոթափելու համար: Արևմտյան Հայաստանի ազատագրման ժողովրդի հավատը հիմնականում կապված է եղել Ռուսաստանի օգնության հետ, և այդ օգնության միջոցով ազատագրվելու համար նա ռուսական հաղթանակներին աջակցել է 1806-1812, 1828-1829, 1853-1856, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմներին: Համոզիչ կռվաններով Ներսիսյանը մերժում է Արևմտյան Հայաստանը Եվրոպայի օգնությամբ ազատագրելու գաղափարը (իմա՝ արևմտյան կողմնորոշումը) և արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությունը առնչում ռուսական կողմնորոշմանը: Պատմական հարուստ տվյալներով Ներսիսյանը հիմնավորել է արևմտյան կողմնորոշման բացասական դերը հայ ազատագրական պայքարի, Հայկական հարցի հաջողության գործում: Արևմտյան բոլոր տերությունների քաղաքականությունը Թուրքիայում առաջնորդվել է այդ պետությունների շահադիտական նկատառումներով, նկատառումներ, որոնք քողարկվել են Օսմանյան կայսրության ամբողջականության պաշտպանի կեղծավոր պահվածքով: Նույնիսկ դիվանագիտության մեջ երբեմն-երբեմն հակաթուրքական լարախաղացությունների պահերին՝ նրանք պաշտպանել են թուրքական բռնապետությունը և թշնամական դիրք գրավել հայ ազատագրական շարժման հաջողության և Հայկական հարցի դրական լուծման նկատմամբ: Ակադեմիկոս Ներսիսյանի գլխավոր եզրակացությունն այն է, որ Արևմտյան տերությունների այս դիր-

քորոշումը ոչ միայն խոչընդոտեց արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությանը, Հայկական հարցի լուծմանը, այլև օգնեց սուլթանական կառավարությանն իրականացնելու արևմտահայ ժողովրդի ցեղասպանությունը:

«Պատմության կեղծարարները»[3] խորագրով վերջին աշխատության (հոդվածների ժողովածուի) մեջ Մ. Ներսիսյանը շարունակում է հավատարիմ մնալ իր դավանանքին: Գիտնականին հուզող հիմնահարցերում պատասխան են ստացել ժամանակակից հայ պատմագիտությանը հուզող այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են հայերի զանգվածային կոտորածներն ու ցեղասպանությունը ժխտող թուրքական պատմաբանների կեղծարարության մերկացումը, հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման, 20-րդ դարի սկզբների ազատագրական շարժման առանձնահատկությունները և այլն:

Ամփոփենք. պատմական փաստերի և կուռ տրամաբանության վրա խարսխված՝ հայ ժողովրդի դարավոր ոգուն հարազատ, ընդդեմ թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1955, 531 էջ:

[2] Տե՛ս Нерсисян М. Г. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Сост. Нерсисян М. Г., Саакян Р. Г., редактор и автор предисловия Нерсисян М. Г., Ереван, изд-во АН Арм. ССР, 1966, 561 стр.

[3] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ. Պատմության կեղծարարները (հոդվածներ և հաղորդումներ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 343 էջ:

Резюме

Академик М. Нерсисян и проблемы изучения Геноцида армян

Норайр Саруханян

Освободительная борьба армянского народа против турецкого ига и Геноцид армян в Османской империи являются одними из основных тем научного наследия академика М. Г. Нерсисяна. Ученый подвергнул глубокому и всестороннему анализу идеологию армян, подчеркнув концепцию русской ориентации армянского народа, разоблачал фальсификации турецких и некоторых иных историков в вопросах положения западных армян и политики геноцида турецкого правительства в отношении армян, в период правления Абдул Гамида II и при младотурках. Проблеме Армянского вопроса и геноцида армян посвящены многочисленные труды ученого, статьи, публикации архивных и иных материалов по данным вопросам ("Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма. 1890-1870гг.", "Геноцид армян в Османской инмерии", "Фальсификаторы истории", "Страницы из новой истории армянского народа" и т.д.). Труды М. Нерсисяна оказали существенное влияние на исследовательское направление армянской историографии 2-ой половины XX столетия.

Summary

The Academician M. Nersisyan and the Problems of Studying of the Armenian Genocide.

Norair Sarukhanyan

The movement for freedom of the Armenian people against the Turkish yoke and the Genocide of Armenians in the Ottoman Empire is one of the main components of the Academician M. G. Nersisyan's historical inheritance. Deeply and comprehensively analysing the leading trends of the movement for freedom and its ideology, the Scholar worked out a proposed and substantiated concept of the movement for freedom. In his works M. G. Nersisyan highly appreciated the activites of the democratic oriented members of that movement, and enriched the concept of the Russian orientation of Armenians. In his works "The Struggle for Freedom of the Armenian Nation against the Turkish Despotism, 1850-1870", "The Genocide of Armenians in the Ottoman Empire", "The Falsifiers of History" and i.g., M. G. Nersisyan exposed the distortion of Turkish and some Western historians, concerning the struggle for freedom, the situation of the Western Armenians and the policy of the Genocide of the Turkish Government during the reign of Abdul Hamid II and the Young Turks. There are various articles, collection of documents and materials published by M. Nersisyan; "Papers from the New History of the Armenian people", devoted to the problems of the Armenian Question and the Genocide of Armenians. The works of M. Nersisyan had an essential influence on the research tendency of the Armenian Historiography of the II half of the XX century.